9145

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«09» 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0120-21

Ձեռնարկողը՝ **«ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ**
Կոտայքի մարզ, Արգել, 14փ., շ.2, բն.21

Գործունեությունը՝ ***Շողակնի փուֆերի երևակման տեղամասում 2021-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական–հետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0120-21

<<09>> 07 2021թ.

Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի երեվակման տեղամասում 2021-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական-հետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	**«ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ**
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Շողակն համայնք

Նախնական գնահատման հայտով նախատեսում է ՀՀ Արագածոտնի մարզի Շողակն համայնքի վարչական շրջանում՝ Շողակն գյուղից հարավ-արևելք 2.1կմ հեռավորության վրա իրականացնել օգտակար հանածոյի (երկրի մակերևույթին մերկացած շագանակագույն-սև տուֆ) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «ՍԵՎԱՐՏ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական միջոցներով:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է Արագածոտնի մարզի Շողակն համայնքի տարածքում գտնվող տուֆերի երևակման 5.86 հա մակերեսի վրա իրականացնել տուֆերի հետախուզական աշխատաքներ, գնահատել դրանց

պիտանելիությունը որպես երեսապատման և ուղիղ կտրվածքի պատքարի հումք, որը կբավարարի 9479 - 98 և 4001 – 98 ԳՕՍՏ – երի տեխնիկական պահանջներին:

Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի երևակումը գտնվում է Ապարան – Երնջատափ – Եղվարդ - Երևան ավտոճանապարհի հարևանությամբ: Մոտակա բնակավայրերն են Երնջատափ, Շողակն և Բուժական գյուղերը, որոնցից ուսումնասիրվող տարածքը գտնվում է համապատասխանաբար՝ 1.7կմ, 2.1կմ և 2.4 կմ հեռավորությունների վրա: Բնակավայրերի հետ կապն իրականացվում է հիմնականում ասֆալտապատ ճանապարհներով:

Հայցվող տեղամասը գտնվում է Արայի լեռան հյուսիս-արևելյան լանջերի ստորոտին, որտեղից մոտ մեկ կմ հեռավորության վրա սկսվում են Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերը: Տեղամասը գտնվում է Քասաղ գետի ձախ ափին:

Հայցվող տեղամասի ռելիեֆը հարթ է, տեղ–տեղ բլրավոր: Թեքության անկյունը կազմում է 5-10^0: Քարաթափումների և սողանքների առաջացման ռիսկերը զրոյական են: Հայցվող տեղամասի շրջանը գտնվում է Գառնու խզվածքային գոտու վրա:

Տեղամասից մոտ 5 կմ դեպի արևմուտք Քասաղի խորը կտրտված կիրճն է:

Հայցվող տեղամասի շրջանում տարածված են կրազերծված խորքային կարբոնատային սևահողեր, անտառային դարչնագույն կրազերծված տափաստանացված և անտառային դարչնագույն կրազերծված խճաքարային հողերը: Հայցվող տեղամասի 3.6 հա հողը արոտավայր է իսկ մնացածը՝ արդյունաբերական նշանակություն ունեն: Հողաբուսական շերտը տեղամասում ունի ոչ համատարած տարածում, դրա հզորությունը կազմում է 0-0.4մ, միջինը՝ 0.2մ:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը շատ պարզ է: Կտրվածքի հիմքում տեղակայված են Արագածի և Արայի լեռան սկզբնական անդեզիտա-դացիտային կազմի արտավիժումները, որոնք մերկանում են հրավավային և հյուսիս-արևելյան շրջաններում: Անդեզիտա-դացիտները խիտ, մուգ մոխրագույն առաջացումներ են:

Անդեզիտա-դացիտներից վերև տեղադրված են լճային նստվածքներ, ավազաքարեր, պեմզային ավազներ, գլաքարերի ենթաշերտերով կավեր: Հաստվածքի վերևի մասում գերակշռում են պեմզաները: Դրանք բավականին լայն տարածում ունեն հարավային շրջաններում և հյուսիս-արևմուտքում: Գրեթե հորիզոնական տեղադրված հաստաշերտ է, որի հաստությունը հասնում է մինչև 30մ:

Պեմզաներից վերև տեղադրված են անդեզիտային կազմի մուգ-շագանակագույն, սև, թութունագույն-շագանակագույն տուֆերը, որոնք տարածված են շրջանի կենտրոնական և հյուսիս-արևմտյան շրջաններում: Դրանք մասամբ ծածկված են լճային նստվածքներով՝ ավազներով, գլաքարերով, կավային պեմզաներով: Դրանք հանդիպում են շրջանի կենտրոնական տեղամասերում՝ ռելիեֆի իջեցված տեղամասերում կղզյակների տեսքով:

Ուսումնասիրվող շրջանը մտնում է Ապարանի ֆլորիստիկ շրջանի մեջ:

Շրջանի կլիման մայրցամաքային է: Ձմռան ամիսներին օդի ջերմաստիճանը միջինը կազմում է -26^{0}C: Ամենաշոգ ամիսներն են հուլիսն ու օգոստոսը, այս ամիսներին ջերմաստիճանը հասնում է +40^{0}C: Մթնոլորտային տեղումների քանակը 200-430մմ/տարի:

Ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Հանքավան - Զանգեզուրի կառուցվածքա - ֆորմացիան գոտու սահմաններում:

Ծրագրով նախատեսվում է հետախուզական աշխատանքներն իրականացնել հորատանցքեր և փորձնական բացահանքի միջոցով: Աշխատանքների տևողությունը հորատանցքերի և օգտակար հանածոյի փորձնական արդյունահանման համար նախատեսված է մինչև 20 օր:

Հորատման հարթակների և ճանապարհների կառուցում ու վերանորոգում չի նախատեսվում, քանի որ ճանապարհներն առկա են իսկ ռելիեֆի հարթ լինելը

հնարավորություն է ընձեռում տեղանքի առանց նախնական հարթեցման հորատող մեքենան տեղակայել և հորատել:

Դաշտային աշխատանքներն նախատեսված է կատարել 3-րդ եռամսյակում: Այն իր մեջ ընդգրկում է մինչև 40 գծ.մ հորատում և 100մ^3 ծավալով օգտակար հանածոյի փորձնական արդյունահանում: Փորձնական հանույթն իրականացվելու է հորատման աշխատանքներն ավարտելուց հետո:

Օգտակար հանածոն նախատեսվում է ուսումնասիրել հորատանցքերով: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատումով ուղղահայաց ուղղությամբ: Հորատումը կկատարվի 112 մմ տրամագծով կարծր համաձուլվածքի թագիկով: Անհրաժեշտ է ապահովել հանուկի 95% - ից ավելի ելք:

Հորատվելու են 7 ուղղահայաց հորատանցք՝ յուրաքանչյունը 5 գծմ միջին խորությամբ: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կլինի 40գծմ: Հորատվող ապարներն ըստ հորատելիության աստիճանի համապատասխանում են V և VI կարգերի:

Հորատումը կատարվելու է URB 2.5A (Zil-131) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 7 տեղակայում և տեղահանում:

Հումքի ինքնարժեքը և որակական պարամետրերը որոշելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոտ 100մ^3 տուֆի փորձնական հանույթ: Հումքը բլոկների տեսքով տեղափոխվելու է քարի մշակման արտադրամաս, որտեղ արտադրական պայմաններում կատարվելու է հումքի փորձարկում՝ սղոցում և մակերեսի հարթեցում:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից:

Հորատհանուկի նմուշարկումը իրականացվելու է անընդհատ տիրույթներով: Սեկցիայի երկարությունը սահմանվում է 3մ: Նախատեսվում է հորատանցքերից վերցնել 13 հանուկային նմուշներ: Հորատահանուկի նմուշարկումը կատարվելու է հանուկը երկարությամբ կիսելու միջոցով, կրկնօրինակը թողնելով արկղերում:

Ապարների քիմիական կազմը և պետրոգրաֆիան որոշելու համար նախատեսվում է տարբեր խորություններից վերցնել 2 ներկայացուցչական կետային նմուշ:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունների գնահատման համար նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել ապարների ռադիոմետրական չափումներ:

Դաշտային աշխատանքների ընթացքում, պարբերաբար, 15-20 օրը մեկ նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի (MKC-AT1117M) էտալոնացում և զգայունության ստուգում:

Մինչև երևակման տեղամասը և տեղամասում ճանապարհների կառուցում և նորոգում չի նախատեսվում, քանի որ դրանք առկա են և բարվոք վիճակում են գտնվում: Չեն կառուցվելու նաև հորատման հարթակներ, քանի որ ռելիեֆը հարթ է, ինչը թույլ է տալիս առանց լրացուցիչ հողային աշխատանքների հորատման հաստոցը տեղակապել և հորատել:

Բացի հորատման աշխատանքներին ծրագրով նախատեսվում են նաև կատարել 1:1000 մասշտաբի տոպո և երկրաբանական հանույթ, հորատահանուկի նմուշարկում և փորձնական հանույթ:

Արտադրական պայմաններում հումքի փորձարկումներ իրականացնելու՝ դրանցից արտադրանք ստանալու, օգտակար հանածոյի օգտակար ելքը, ինչպես նաև ինքնարժեքը որոշելու նպատակով նախատեսված է անցնել մոտ 100մ^3 փորձնական հանույթ՝ բլոկների դուրս բերում: Փորձնական բացահանքը ունենալու է մոտ 50մ^2 մակերես:

Հայցվող տեղամասը սահմանափակված է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝ (կոորդինատները բերված են ARMWGS 84 համակարգով).

1. Y = 8456553.69, X= 4479128.51

2. Y = 8456580.53, X= 4479154.39
3. Y = 8456581.86, X= 4479194.06
4. Y = 8456570.18, X= 4479195.24
5. Y = 8456541.37, X= 4479200.16
6. Y = 8456537.07, X= 4479204.62
7. Y = 8456539.90, X= 4479208.86
8. Y= 8456534.24, X=4479236.80
9. Y= 8456542.95, X= 4479234.95
10. Y= 8456547.28, X=4479251.30
11. Y=8456546.39, X= 4479289.66
12. Y=8456554.93, X= 4479337.16
13. Y= 8456594.61, X= 4479370.12
14. Y= 8456655.74, X= 4479406.07
15. Y=8456693.97, X= 4479428.55
16. Y= 8456870.37, X= 4479337.74
17. Y= 8456799.06, X= 4479199.21
18. Y= 8456791.76, X= 4479202.97
19. Y= 8456767.56, X= 4479217.89
20. Y= 8456743.43, X= 4479230.15
21. Y= 8456735.31, X= 4479233.75
22. Y= 8456696.26, X= 4479214.30
23. Y= 8456661.65, X= 4479197.76
24. Y= 8456625.51, X= 4479103.70

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի և «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիաներում:

Լաբորատոր հետազոտությունների ընթացքում անհրաժեշտ է տուֆերի համար որոշել հետևյալ ֆիզ.մեխ. հատկությունները.

1. ծավալային զանգվածի խտությունը,
2. տեսակարար կշիռը,
3. միջհատիկային դատարկությունների ծավալը,
4. ապարի կտորում ծավալային կշիռը,
5. ապարի կտորի ծակոտկենությունը,
6. ջրհագեցվածությունը,
7. խճի ծավալային զանգվածի խտությունը,
8. խճի հատիկային կազմը,
9. ապարի սեղմման դիմադրությունը:

Տեխնիկական միջոցները աշխատանքների կատարման ողջ ընթացքում մնալու են տեղամասում: Վառելիքը մատակարարվելու է մոտակա լցակայաններից: Տեղամասում յուղերի կամ վառելիքի պահում չի նախատեսվում:

Այս ընթացքում տեղամասում աշխատելու է մեկ հորատող հաստոց, մեկ էքսկավատոր, մեկ բեռնատար և մեկ մարդատար ավտոմեքենաներ:

Անմիջապես երևակման տարածքը գործնականում զուրկ է բուսածածկից, որի պատճառ են հանդիսանում մակերևույթին մերկացող հողմնահարված տուֆերն ու պեմզային ավազները:

Օգտակար հանածոյի արդյունահանումից անմիջապես հետո խախտված ռելիեֆը վերականգնվելու է, ինչի արդյունքում փորձնական բացահանքի անցման ժամանակ մակաբացման ապարների թափոններ չեն առաջանալու:

Նկարագրված ապարներն իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների և հետևաբար շրջակա միջավայրի և մարդկանց առաղջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու:

Հանքավայրի և մերձակա տարածքներում բնության և պատմամշակութային հուշարձաններ, առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչները բացակայում են: Տեղամասի տարածքում կենդանական աշխարհի ներկայացուցիչների բներ, բնադրավայրեր չեն դիտարկվել:

Խմելու և տեխնիկական ջրի մատակարարումը տեղամաս իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ- ի հետ կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Տեղամասում տեղադրվելու է անհրաժեշտ կահավորումներով վագոն–տնակ: Աշխատանքներն ավարտելիս դա կտեղափոխվի:

Կեղտաջրերը հավաքվելու են հորատիպ զուգարանում, որը աշխատանքներն ավարտելուց հետո մաքրվելու է Ապարանի քաղաքապետարանի քաղաքաշինության և կոմունալ ծառայության կողմից: Աշխատանքներն կարճատև են, ուստի երկարաժամկետ միջոցառումներ չեն նախատեսվում:

Ընկերության կողմից նախատեսվող գործունեության արդյունքում առաջացող թափոնների կառավարման նպատակով ընդերքօգտագործման թափոնների նոր օբյեկտների կառուցում չի նախատեսվում, քանի որ դրանք ժամանակավոր են: Երկրաբանական աշխատանքների տեղամասում թափոնների կուտակում կամ պահեստավորում չի նախատեսվում:

Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Ռեկուլտիվացման ենթակա է 100 մ^3 ծավալով փորձնական բացահանքը: Օգտակար հանածոն արդյունահանելուց հետո բացահանքի հատակը հարթեցվելու է և հանված հողի շերտը փռվելու է հարթեցված մակերեսին: Փորձնական բացահանքը ունենալու է մոտ 50մ^2 մակերես: Ռեկուլտիվացման աշխատանքների համար հաշվարկվել է 100.000 ՀՀ դրամ:

Երկրաբանական ուսումնասիրության դաշտային աշխատանքները կարճատև են, որևիցե էական բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա չեն ունենա:

Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում աննշան տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքերևակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր նախատեսված չեն, ուստի ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա: Հողաբուսական շերտի պահպանում և պահեստավորում չի նախատեսվում:

Հողերի հնարավոր աղտոտում կարող է տեղի ունենալ մեքենաների աշխատանքի ընթացքում յուղերի կամ վառելիքի արտահոսքի հետևանքով: Սակայն դրանք չեն կարող

ընդարձակ տեղամասեր աղտոտել: Աղտոտված տեղամասերից հողը անմիջապես կհեռացվի ու կմաքրվի:

Բնապահպանական միջոցառումների (մշտադիտարկումների) իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել առնվազն 150.0 հազ.ՀՀ դրամ:

Ընկերությունը նախատեսում է Շողակն համայնքի բյուջե յուրաքանչյուր տարի փոխանցել 100.000 ՀՀ դրամ:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է մթնոլորտի, հողի և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:
- Ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումների վերահսկման նպատակով մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում:
- Շոգ օրերին իրականացնել արտադրական հրապարակի և մոտեցման ճանապարհների ջրցանում, փոշենստեցման նպատակով: Աշխատանքներն իրականացվելու են Ապարանի համայնքապետարանի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության կողմից պայմանագրային հիմունքներով:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում կդատարկվի Ապարանի համայնքապետարանի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ծառայությունների կողմից պայմանագրային հիմունքներով:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Պատճառաբանական եզրահանգումներ.

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Արագածոտնի մարզպետարանն ու այլ գերատեսչություններ:

Փորձաքննության ընթացքում նախագիծը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Շողակն համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է.
   - պարբերաբար իրականացնել հողի, օդի, կենսաբազմազանության մոնիթորինգ և արդյունքները ներառել մոնիթորինգի պլանում,
   - խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը,

- ապահովել և պահպանել շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները,
- նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացնել ըստ ներկայացված ժամանակացույցի:

2. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՍԵՎԱՐՏ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող Արագածոտնի մարզի Շողակնի տուֆերի երևակման տեղամասում 2021-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական–հետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
մասնագետ՝ Մ. Ավետիսյան

Ընդամենը՝ 7 էջ: